ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԵՎ

ք. Երևան, « 29 »-ը հոկտեմբերի 2019թ.

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ի դեմս նախագահ Գեղամ Գևորգյանի, ով գործում է Հանձնաժողովի կանոնադրության հիման վրա և Հայաստանում ֆրանսիական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս ռեկտոր Ժան-Մարկ Լավեստի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով կրթական, գիտական համագործակցությունը և նպատակ ունենալով ներգրավել Համալսարանի գիտական ներուժը տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում՝ կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին:

1. Սույն հուշագրի շրջանակներում կողմերը համաձայնվում են՝
1.1. պարբերաբար համատեղ քննարկել Կողմերի համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք կարող են նպաստել կողմերի միջև փոխգործակցությանը, կրթության որակի բարձրացմանը, Համալսարանի ուսանողների ներգրավմանը Հանձնաժողովի գործունեության տարբեր ոլորտներում,
1.2. կազմակերպել կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող հետազոտական, վերլուծական աշխատանքներ՝ Համալսարանի ուսանողների, դասախոսների մասնակցությամբ,
1.3. կազմակերպել Հանձնաժողովի ներկայացուցիչների հանդիպումներ Համալսարանի

CONVENTION DE COOPERATION
ENTRE LA COMMISSION D'ÉTAT DE LA PROTECTION DE LA CONCURRENCE ÉCONOMIQUE DE L'ARMÉNIE ET L'UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE

Erevan, le 29 octobre 2019

La commission d'Etat de la protection de la concurrence économique de l'Arménie (ci-après désignée Commission) représentée par son président Gegham Gevorgyan, qui agit conformément au règlement de la Commission et l'Université française en Arménie (ci-après désignée Université) représentée par son recteur Jean-Marc Lavest, qui agit conformément à son règlement (ci-après désignée Parties), valorisant la coopération dans le domaine de la formation et des sciences et ayant pour objectif l'implication du potentiel scientifique de l'Université dans le domaine de la protection de la concurrence économique ont signé la présente convention concernant les points suivants.

1. Dans le cadre de cette convention les Parties ont convenu de:
1.1. discuter régulièrement des questions d'intérêt commun pouvant conduire à une collaboration entre les Parties, à l'amélioration de la qualité de formation, à l'implication des étudiants de l'Université dans les différents domaines d'activité de la Commission,

1.2. organiser des travaux de recherche, d'analyse pertinente pour les 2 Parties avec la participation des étudiants, des professeurs de l'Université,
1.3. organiser des rencontres des représentants de la Commission avec les étudiants et les professeurs de l'Université, des conférences autour des

ուսանողների և դասախոսների հետ, դասախոսություններ՝ Հանձնաժողովի գործունեության ոլորտին վերաբերող հարցերի շուրջ,	questions concernant l'activité de la Commission,
1.4. կազմակերպել Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ կլոր սեղաններ, գիտաժողովներ, թեմատիկ սեմինարներ, դատախաղեր և գիտագործնական միջոցառումներ,	1.4. organiser des tables rondes, des colloques, des séminaires thématiques, des plaidoiries et d'autres manifestations scientifiques et pratiques avec la participation des représentants de la Commission,
1.5. կազմակերպել ուսանողների այցելություններ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներ, նրանց ներգրավել Հանձնաժողովի գործունեության տարբեր ուղղություններով իրականացվող աշխատանքներին,	1.5. organiser des visites pour les étudiants dans les différents départements de la Commission, les impliquer dans les différents types d'activité de la Commission,
1.6. փոխանակել համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերին առնչվող գիտակրթական նյութեր, հրապարակումներ, օրենքով և այլ իրավական ակտերով պահպանվող գաղտնիք չհանդիսացող այլ տեղեկատվություն,	1.6. échanger des matériaux éducatifs et scientifiques, des publications, d'autres informations ne faisant pas l'objet de secret protégé par les lois et pas les actes juridiques et qui concernent les questions d'intérêt commun,
1.7. Հանձնաժողովի աջակցությամբ համատեղ մշակել և կազմել տնտեսական մրցակցության ոլորտին առնչվող առարկաների դասավանդման ծրագրերը,	1.7. élaborer le contenu des cours liés au domaine de la concurrence économique avec le soutien de la Commission,
1.8. Համալսարանի ուսանողներին տալ հնարավորություն արտաղրական պրակտիկան անցկացնել Հանձնաժողովում, ներգրավել Հանձնաժողովի աշխատանքներում որպես փորձնակ,	1.8. donner la possibilité aux étudiants de l'Université d'effectuer leurs stages au sein de la Commission, participer aux travaux de la Commission en tant que stagiaire,
1.9. Համալսարանի կողմից հրատարակվող ուսումնամեթոդական նյութերի պատրաստման աշխատանքներին հնարավորության դեպքում ներգրավել նաև Հանձնաժողովի աշխատակիցներին:	1.9. dans la mesure du possible impliquer aussi le personnel de la Commission aux travaux de préparation des matériaux pédagogiques et méthodologiques publiés par l'Université,
2. Կողմերը նպատակահարմար են գտնում մշտապես վերլուծել և մշակել համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր՝ տնտեսական մրցակցության ոլորտին առնչվող կրթական ծրագրերի կատարելագործման և դրանք գործարար մակարդակում կիրառելու նպատակով:	2. Les Parties le jugent opportun d'analyser et de développer régulièrement d'autres formats plus efficaces de coopération visant à améliorer les programmes de formation liés au domaine de la concurrence économique et à les appliquer sur le terrain.
3. Սույն հուշագիրը Կողմերի համար չի առաջացնում պարտավորություններ, չի պարունակում պարտադիր կատարման ենթակա դրույթներ, այն հաստատում է կողմերի միջև համագործակցության ցանկությունը և պատրաստակամությունը:	3. Les Parties acceptent que la présente convention n'impose aucune obligation, ne contient pas de clauses obligatoires, elle constate la volonté de coopération entre les Parties.
4. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:	4. La présente convention entre en vigueur dès la signature de celui-ci par les deux Parties pour une durée indéterminé.

5. Սույն հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին ուսումնական տարվա սկզբից առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

6. Սույն հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի ստորագրելուց հետո և կազմում են սույն հուշագրի անբաժանելի մասը:

7. Սույն հուշագիրը կնքված է հայերեն և ֆրանսերեն լեզուներով՝ երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, յուրաքանչյուր կողմին տրվում է հուշագրի մեկական օրինակ: Հուշագրի հայերեն և ֆրանսերեն տեքստերի միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

8. Կողմերի հասցեները և ստորագրությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Նախագահ
Գեղամ Գևորգյան

(ստորագրություն)

Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Միհեր Մկրտչյան 5բ

5. La présente convention peut être résiliée à l'initiative de chaque partie en donanın un préavis à l'autre Partie au moins deux mois avant le début de l'année académique.

6. Les amendements et les ajouts dans la présente convention peuvent être effectués d'un commun accord, par voie d'avenant.
Les avenants entrent en vigueur dès leur signature par les Parties et font partie intégrante de la présente convention.

7. La présente convention est rédigé en deux exemplaires en arménien et en français, dont chacune est considérée comme un exemplaire original. Un exemplaire de convention est remis à chaque Partie. En cas de contradiction entre les textes français et arménien, la version arménienne prévaudra.

8. Les adresses et les signatures des Parties.

UNIVERSITE

Université française en Arménie

Recteur
Monsieur le professeur
Jean-Marc Lavest

(signature)

10 Davit Anhaght, 0037 Erevan